

ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍԻ ՊԱՀԱՆՁՄՈՒՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ

Վիշա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

Քանակի բառեր և արտահայտություններ - պահանջմունքներ (փիզիոլոգիական, սոցիալական, հոգական շփման, կյանքի իմաստի), պահանջմունքի ձևավորում և բավարարում, կյանքի իմաստի կորուստ, ինքնազնահատուկան, նույնականացում իդեալի հետ, հեղողիզմ, պուրիզմաթ, էրգիստնցիալիզմ:

Ключевые слова: потребности (физиологические, социальные, в эмоциональных связях, в смысле жизни), формирование и удовлетворение потребностей, потеря смысла жизни, самооценка, идентификация с идеалом, гедонизм, пубертат, экзистенциализм.

Key words: needs (physiological, social, in emotional relationships, in the sense of life), the formation and satisfaction of needs, the loss of meaning in life, self-concept, identification with the ideal, hedonism, puberty, existentialism.

Վ.Յարամիշյան

Պո треб ость смысла жизни и ее удовлетворение

В статье обсуждаются некоторые вопросы, связанные с психологической проблемой формирования, удовлетворения или неудовлетворения потребности смысла жизни. Предпринята попытка проанализировать эту неоднозначную проблему с точки зрения некоторых психологических теорий, в частности, экзистенциальной концепции. Неудовлетворенность потребности смысла жизни вызывает глубокий кризис, для преодоления которого потребуются значительные усилия.

V.Yaramishyan

The Need for the Meaning of Life and its Satisfaction

In the article some questions connected with a psychological problem of formation, satisfaction or dissatisfaction of requirement of meaning of life are discussed. An attempt to analyze this intricate problem from the point of view of some psychological theories, in particular, of the existential concept is made. The dissatisfaction of requirement of meaning of life causes deep crisis which overcoming will require considerable efforts.

Հոդվածում քննարկված են կյանքի իմաստի պահանջմունք՝ որպես հոգեբանական հիմնախնդրի, ձևավորման և բավարարման մի բանի հարցեր: Փորձ է արված այս ոչ միանշանակ հասկացությունը վերլուծելիողեքտանական մի բանի տեսությունների, մասնավորապես՝ էրգիստնցիալիստական հայեցակարգից: Կյանքի իմաստի պահանջմունքի չբավարարումը հանգեցնում է խոր ճգնաժամի, որի հաղթահարման համար պահանջվում են նշանակալի ջանքեր, իսկ բավարարման դեպքում բարձրանում է ինքնազնահատուկանը, անձն իրեն կարևոր և բավարարված է զգում:

Կյանքի իմաստը ոչ այնքան հոգեբանական, որքան հոգևոր-փիլիսոփայական նորույթ է: Նրա վերաբերյալ կարենի է դատողություններ անել, տեսական վարկածներ, փիլիսոփայական, աստվածաբանական և կրոնական բացատրություններ առաջարեն, սակայն թե՞ «ո՞րն է կյանքի իմաստը», գիտությունը (մասնավորապես՝ հոգեբանությունը) միանշանակ պատասխաննել չի կարող: Գիտությունը կարող է միայն ճշմարտանման պատասխաններ տալ այն հարցերին, թե՞ «ինչպե՞ս», «ի՞նչ պայմաններում», «ի՞նչ կլինի, եթեն...»: Գիտական բացատրություն գտնելու դժվարությունն այն է, որ կյանքի իմաստն անմիջականորեն առնչվում է մարդու՝ որպես կենսաբանական էակի, գոյության վերջնական նպատակին, մարդկության՝ որպես հանրույթի, նախանշանակությանն ու առարենությանը: Քննարկող խնդիրն անձնային առումով նույնպես բավականաչափ բարդ է, թենի միանգամայն ակնհայտ է, որ կյանքի իմաստի հստակեցումը կարևոր նշանակություն ունի անձնավորության հոգևոր-բարյուական կերպարի ձևավորման գործում, իսկ դրա բացակայությունը հղի է ոչ զանկալի հետևանքներով: Անձնային առումով կյանքի իմաստը կարենի է հասկանալ որպես նպատակադրում, շրջապատող իրականության վրա ներազդելու ոճ, ապրած կյանքի ընթացքում ձեռք բերած արդյունքների համապատասխանեցում՝ նախնական մտադրություններին: Այս դեպքում ենթադրվում է գտնել հետևյալ հարցերի պատասխանները՝

- որո՞նք են կյանքի կարևոր արժեքները,
- ո՞րն է կյանքի (մարդու) նպատակը,
- արժե՞, արդյոք, ապրել և, եթեն այո, ապա՝ ինչի՞ համար:

Անձնային առումով կյանքի իմաստի վերաբերյալ նախնական պատկերացումները ձևավորվում են գործունության ընթացքում և կախում ունեն կոնկրետ իրադրությունից, անհատի սոցիալական կարգավիճակից, լուծվող խնդիրների բովանդակությունից, անձի հոգեբանական առանձնահատկություններից՝ մասնավորապես՝ աշխարհընկալումից: Այստեղ ևս չլուծված

Խնդիրներն ավելի շատ են, քան լուծվածները, քանի որ, որպես կանոն, արտաքին բարենպաստ պայմանների դեպքում մարդն իր համար սովորաբար կյանքի իմաստ է ընտրում հաջողության և երջանկության հասնելը, իսկ անբարենպաստ, թշնամական պայմաններում, ընդհակառակը, կյանքը կարող է իմաստագրկվել, կորցնել իր արժեքավորությունը:

19-րդ դարի վերջին-20-րդ դարին մասնագետները պնդում էին, որ մարդու բոլոր օրգանները զարգանում են որոշակի նպատակի ուղղությամբ: Աստ Ա. Աղջերի՝ «Հոգու զարգացումը նման է օրգանական զարգացմանը: Ամեն մարդ ունի կոնցեպցիա կամ իդեալ, որն անհրաժեշտ է այն բանին հասնելու համար, ինչը նա համարում է ակտուալ՝ տվյալ իրադրության մեջ: Առանց նպատակի մարդու գործունեությունը զրկված կլիներ որևէ իմաստից»[5]: Ա. Աղջերը հետաքրքիր եզրահանգում է կատարել նաև այն մասին, որ «իմաստն» իմաստ ունի միայն այն դեպքում, եթե արտահայտվում և հասկացվում է ուրիշների կողմից, այնպես, ինչպես խոսքը [6]: «Ետազայում կյանքի իմաստի գիտական ընկալումը խիստ անհատականացվել է: Կ. Ռոդերսն իր «Անձի տեսություն» գրքում խոսնել է այն մասին, որ յուրաքանչյուր անհատ գոյատևում է անընդհատ փոփոխվող այն ապրումների աշխարհում, որոնցին տրունում գտնվում է ինքը: Ըստ նրա, ճշմարտությունն այն է, որ անհատի անձնական կյանքի իրական և ամբողջական իմաստը կարող է իմանալ միայն ինքը՝ անհատը: Միայն ինքը կարող է իմանալ, թե ինչպես են ընկալում այս կամ այն զգացումը: Մարդը երբեք չի կարող ճշգրիտ իմանալ, թե ինչպես են ուրիշներն ընկալում ասելի սրբումը կամ քննության տապալումը: Ամեն մարդու համար իր ապրումների աշխարհը, բայիս բոլոր իմաստով, անհատական, անձնական աշխարհն է[4]:

Կյանքի իմաստի թեման առավել ամբողջական է ներկայացրել ավատրիացի հոգեբոյժ և նկրող Վ. Ֆրանկլը՝ պնդելով, որ կյանքի իմաստը ոչ միայն անհատական է, այլ նաև տարբեր է նույն անհատի համար կյանքի տարրենք փուլերում[3]: Մարդու համար կյանքի իմաստի փնտրությը նրա բնազդային մղումների իրազործումը չէ, այլ կյանքի գլխավոր շարժի ուժը: Կյանքի իմաստն ունիկալ և առանձնահատուկ է այն պատճառով, որ կարող է իրականացվել միայն տվյալ մարդու կողմից և միայն այն ժամանակ, եթե նա կիսականա, թե կոնկրետ ինչը և ինչպես կարող է բավարարել նրա կյանքի իմաստի պահանջմունքը:

Ժամանակակից հոգեբանությունը գտնում է, որ կյանքի իմաստը «բոլոր մարդկանց բնորոշ մոտիվացիոն միտում է, որը հանդիսանում է անձնավորության վարքի և զարգացման հիմնական շարժի ուժը: Ըստ Վերջին հետազոտությունների, այն մարդիկ, ովքեր գտնում են ապրել իմաստալից, ծննդային ժամանակ էլ պահպանում են մտքի պայծառությունը, հոգեկանի առողջությունը և նոյնիսկ ավելի երկար են ապրում, քան նրանք, ովքեր ապրում են միայն կյանքից բավականություն ստանալու համար»[1]:

Հոգեբանության տեսությամբ զբաղվող մասնագետների համար միանշանակ է, որ հոգեկանի բոլոր դրսնորումները, մասնավորապես՝ անձնավորության պահանջմունքների համակարգը, բարդ կառուցվածքը ունեն: Պատմականորեն մշակվել են բազմաթիվ մոտեցումներ՝ մարդու պահանջմունքների վերաբերյալ ու փորձեր են կատարվել դրանք ենթարկելու աստիճանաբաշխական դասակարգման, սակայն գրեթե բոլոր ենթականները համեմատչելու են եղել այն հարցում, որ երևույթն ավելի քան բարդ է [2,5]: Խորքային տեսությունները (Զ. Ֆրեյի հոգեվերլուծությունը, Ա. Աղջերի անհատական հոգեբանությունը, Է. Ֆրումի մարդասիրական հոգեկերպությունը, Կ. Հորնիի նկրոտիկ հակամարտությունների տեսությունը, Կ. Յունգի անալիտիկ տեսությունը, Է. Էրիկսոնի Ես-հոգեվերլուծությունը, Է. Բյորնի տրանսակցիոն վերլուծությունը), հումանիստական հոգեբանությունը (Ա. Մալոուի հումանիստական թեորիան, Կ. Ռոդերսի մարդակենտրոն մոտեցումը), էքզիստենցիալ հոգեբանությունը (Ի. Յալումի, Ռ. Մեյի, Ջ. Բյուզնենտալի դպրոցը, Վ. Ֆրանկլի լոգոթերապիան, Ս. Լենգլիի էքզիստենցիալ վերլուծությունը), կոգնիտիվ և սոցիալ-կոգնիտիվ ուղղությունը (Զ. Կոլլիի անձնային կոնստրուկտունների, Ա. Բանդրուրայի և Ջ. Ռոտեների սոցիալ-կոգնիտիվիստիկական թեորիանները), բիկլիորիստիկական հոգեբանությունը (Բ. Արիների օվենրանտ ուսուցման թեորիան), անձի տեսության դիսորգիոն ուղղությունը (Գ. Օլպորտ), կոնստրուկտունների թեորիան (Ռ. Կետտեն), հոգեկան խանգարումների տեսությունները (Կ. Յասպերսի հոգեկան կյանքի շեղումների, Կ. Լեռնիարդի անձնային շեշտադրվածության թեորիանները, Պ. Գուրեսիչի անձի կլինիկական տեսությունը) տարբեր տեսանկյուններից ու յուրահատուկ մեթոդաբանությամբ բացահայտում են անձնավորության հոգեբանական ձևափորման, դրսորման գործընթացները []: Թվարկված տեսություններն ու մոտեցումներն իրենց բազմազանությամբ ապացուցում են, որ երբեք և ոչինչ այնքան պարզ չէ, որքան թվում է:

Այս հոգեբանությունը մենք կփորձենք անդրադառնալ անձնավորության, այսպես կոչվող, սոցիալական պահանջմունքների համակարգում առանձնահատուկ տեղ զբաղեցնող մի պահանջմունքի, որին ընդունված է անվանել «կյանքի իմաստի պահանջմունք»: Միանգամից նշենք, որ հասուն,

ձևավորված մարդու գործունեության այն գլխավոր ուղղվածությունը, որը կարող է դրսնորվել վարքային կայուն գծի իրացմամբ, կյանքի իմաստի պահանջմունքն է: Պարզ մեկնաբանությամբ, «իմաստը» որևէ երևույթի, առարկայի, խորհրդանշանի նշանակության անձնային ընկալումն է: Քիչ ավելի ընդլայնված պատկերացմամբ, «իմաստը» ինչ-որ բանի իդեալական բռվանդակությունն է, եռության գաղափարը, նախանշանակությունը, վերջնական նպատակը, արժեքափորությունը [4]:

Դատելով մարդու վարքագծից և գործողություններից, դժվար է միանշանակ պնդել, թե նրա հոգեկանում կյանքի իմաստի պահանջմունքը վերջնականորեն ձևավորված է, ավելին՝ բավարարված է թե, թե՞ ոչ: Բանն այն է, որ այս պահանջմունքի ձևավորված կամ բավարարված լինելու վերաբերյալ արտաքին նշաններ թիվ կան: Համեմատելու համար նկատենք, որ հոգական շիման պահանջմունքը մարդու անհատական զարգացման ժամանակ ձևավորման ընդգծված ընթացք չի ունենում և նրա բավարարումը վրա է հասնում այն ժամանակ, եթե մարդուն հաջողություն է իր մասնակցությամբ կամ ներկայությամբ հոգական դրական ֆոն ստեղծել այլ մարդկանց միջավայրում: Հոգական շիման պահանջմունքն ուղղված է իրական, այսրոպեական նպատակների իրազրծմանը, այսինքն՝ հեռազնա ռազմավարություն չունի: Ասկածի «իմաստն» այն է, որ բավական է, որպեսզի մարդը հայտնի ուղարկության կենտրոնումուայնպիսի զգացողություն ունենա, որին ընդունում են, հարգում, հաշվի նստում իր հետ, որպեսզի նրա հոգական շիման պահանջմունքը լիովինքավարարվի: Կյանքի իմաստի պահանջմունքն անհամեմատ հասուն, գիտակցված պահանջմունք է և այլ մեխանիզմով է բավարարվում: Այս պարագայում մարդու հոգեկանն ուղղված է լինում այն բանին, որպեսզի շրջապատի մարդիկ ընկալեն և խրախուսեն իր գործողությունները՝ անկախ հոգական վերաբերմունքից: Եթե հոգական շիման պահանջմունքը որոշակի փուլում անձնավորության ձևավորման շրջանում, կարող է օգտակար դեմք կատարել, ապա հասունացած մարդու համար այն կարող է «պարզունակ ու նեղ» լինել և վերածվել արգելակի: Նկատենք, որ Ա. Աղելերի անհատական հոգեբանության տեսանկյունից, այսպես կոչվող, «չհասունացած անձնավորության» հոգեբանությունն այսօր կիրառվի է, թերևս, միայն ախտաբանական հոգեբանության համար: Ըստանիքը, աշխատանքը, հասարակությունը հաճախ մարդուն առաջարրում են բազմապիսի խնդիրներ, ուստի ոչ միշտ է հնարավոր լինում հասնել համարած քաջալերանքի: Առաջ է զայիս ընտրություն կատարելու անհրաժեշտություն: Կատարված ընտրությունը վերաբերվում է կյանքի ուղու հստակեցմանը, ինչն էլ ենթադրում է կայուն սկզբունքների մշակում և կիրառում: Առանց կայուն սկզբունքների մարդը շատ արագ տեղի կտա՝ կյանքի բազմաբնույթ մարտահրավերների առջև: Նրա հոգեկանը, պատկերավոր ասած, «կիզուզվի»:

Այսպիսի տրամաբանությունը նշանակո՞ւմ է, արդյոք, թե յուրաքանչյուր որ միշտ ունենում է կյանքի իմաստի ձևավորված պահանջմունք և հստակորեն գիտակցում է իր գործողությունների հիմնական ուղղվածությունը: Դիտարկումներն ակնհայտորեն վկայում են, որ ոչ, չի գիտակցում կամ միշտ չէ, որ գիտակցում է: Այլ լինդիր է, որ մարդը հաճախ պարտավոր է լինում որոնել և գտնել այն՝ կյանքի իմաստը, ինքն իրեն հաշվետու լինելու և հստակեցնելու համար, թե ինչո՞ւ, ի՞նչ արդյունքի հասնելու համար է անհրաժեշտ այսպես կամ այնպես գործել: Սա էլ հենց կյանքի իմաստի պահանջմունքն է, որնիրմեզ ներառում և կենտրոնացնում է գոյություն ունեցող մյուս բոլոր պահանջմունքները: Թնարքենք տիպական օրինակներից մեկը՝ մոր՝ երեխայի նկատմամբ ցուցաբերած խիստ բնական ու հասկանալի հոգատարությունը: Մայրը կարող է այդ մասին բարձրածայն չխոսել, նույնիսկ չնկատել, թե որքան է ինքը կենտրոնացած իր երեխայի խնամքի հարցնորդ, սակայն նրա բոլոր արտահայտություններն ու գործողությունները միանշանակ միտված կլինեն երեխայի խնամքին ու պաշտպանությանը: Եթե երեխան հեռանում է, մայրն իրեն դժբախտ է զգում և ասում է՝ «կյանքը կորցրել է իմաստը»: Այս ճշմարտությունը վաղուց են նկատել ոչ միայն ընտանիքի, այլ նաև աշխատանքի հոգեբանությամբ զրադիր մասնագետները: Օրինակ, մերենաշինական գործարանի հարահոսի վրա աշխատող բանվրդը, որն ինչ-որ դետալ է կցում մերենային և դրա դիմաց ստանում է նյութական վարձատրություն, հավանաբար, ինքնանվաստացման ու հիապատկության զգացումներ կունենա, եթե ուղղակիրեն հարց տա ինքն իրեն՝ «ինչո՞վ եմ զրադիր կամ ինչ նշանակություն ունի այն աշխատանքը, որը ես եմ կատարում», սակայն նա իր ծանծրալի թվացող գործին մեծ կարևորություն կտա, եթեն գիտակցի, որ իր մասնակցությունից է կախված լինելու պատրաստվող մերենայի որակը: Հակառակ դեպքում, զարգանում է աշխատանքից բավարարված չլինելու, իր արժեքը նսնմացնելու, անտարբերության զգացումներ: Անձնական դիտարկումներից կարելի է անդեմ, որ ասվածն առավել մեծ չափով վերաբերվում է զինծառայողներին, օրինակ՝ մարտական դիտակների դիտորդին, որը երեխմն ժամենք շարունակ իրականացնում է հակառակորդի գործողությունների դիտարկում, սակայն վերջինիս կողմից առանձնահատուկ որևէ գործողություն չի նկատում: Զուտ արյունքի տեսակներից, նրա աշխատանքը ցուցել չէ չի արժեքավորություն ունի (բանի որ ոչինչ չի դիտարկել, որովհետև

դիտարկելու ոչխնչչի եղել), սակայն այդ արժեքավորությունը հազարավոր անգամ կմեծանա, եթե խնդրին մոտենանք հայրենիքի զինյալ պաշտպանի կողմից պետական սահմանի հուսալի պաշտպանության տեսակետից:

Լյանքի իմաստի պահանջմունքը հոգեկան գործնաթաց չէ, այլ հատկություն, ինչպես թոշնի համար՝ թուիչը: Ապրելով հասարակության մեջ, մարդն անպայման պետք է գտնի լյանքի իր ուղին, այն ճանապարհը, որը նրան կտանի դեպի ընդունակությունների դրսերում: Այստեղ պետք է կատարենք մեկ վերապահում: «Պետք է գտնի լյանքի իմաստը» արտահայտությունն դեռևս չի նշանակում, որ այդպես էլ կա: Ներուիկ մարդիկ միշտ չեն, որ «գտնում են» կյանքի իմաստը: Այնպիսի դեպքերում, երբ մարդը հայտարարում է, որ լյանքն իր համար այլս իմաստ չունի, որովհետև «գործադրվող ջանքներն ապարդյուն են», դեռևս չի նշանակում, որ նա իրականում կորցրել է լյանքի իմաստը և «ամեն ինչ վերջացած է»: Հասթափված, սակայն հոգեկան ամրության որոշակի պաշար ունեցող մարդկանցից շատերը կարող են շարունակել ակտիվ գործել՝ բավարարելով լյանքի իմաստի պահանջմունքը: Հասթափության զգացումը պարզապես կարող է ապամոբիլիզացնել մարդու հոգեկան ներուժը՝ նրան տալով ակտիվ ջանքերից հետ կանգնելու մոտիվներ: Ինչ վերաբերում է մարդու կողմից արված վերքալ արտահայտությանը՝ հայտարարությունը, ապա այն կարող է մնալ «հայտարարության» մակարդակի վրա, և ոչ ավելին:

Լյանքի իմաստի պահանջմունքը ձևավորման վրա ազդեցություն են ունենում բազմաթիվ գործններ, որոնց թվից մենք կառանձնացնենք երկու հիմնական չափորոշչի:

1. Մարդը, լյանքի իմաստի պահանջմունքը ուղղորդմամբ, ուժերի գերլարումով ձգուում է իր նպատակներին՝ հաշվի չառնելով ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարման անհրաժշտությունը: Ծրապատում հաճախ կարելի է հանդիպնել հրապուրված, ոգևորված, ֆիզիկական զրկանքները չնկատող և դրանք արհամարիող մարդկանց, ում գործողությունները դեկավարփում են, ինչպես իրենք են մեկնաբանում, «խստ կարևոր գաղափարով»: Նման իրավիճակը ակնհայտորեն մատնանշում է լյանքի իմաստի պահանջմունքի լիարժեք ձևավորման մասին:

2. Լյանքի որևէ փուլում մարդը հիասթափվում է, կորցնում եռանդը: Այս դեպքում կարող են վրա հասնել լարվածությունը, նկրոտիկ ռեակցիաները: «Լյանքն ինձ համար այլս իմաստագրկվել է՝ հայտարարում է ընկճված հոգեվիճակում հայտնված մարդը:

Լյանքի իմաստի պահանջմունքի բավարարումը: Հաջողակ ու ճանաչված մարդկանց մեծամասնության համար լյանքի իմաստի բավարարումն է եղել նրանց նշանակալի աշխատությունների ստեղծման շարժիք ուժը: Այն բանի զիտակցումը, որ անհատն իսկապես կարեւոր է, որ նրա աշխատանքն ուղղված է մարդկության բարօրությանը, բազմապատկում են ուժերը, արդյունավետ են դարձնում գործունեությունը: Այսպիսի ընկալումից են առաջ զայխ «հայրենասիրական պարտը», «քժշկի առաքելություն», «ուսուցչի բարձր անուն» և այլ հասկացությունները: Նման գաղափարներով տողորված մարդն իրեն նույնականացնում է իդեալի հետ և ուղղված է լինում իր արժանիքների վերարտադրմանը: Սակայն, այսպիսի նույնականացումը էականորեն տարբերվում է դեռահասության տարիքում իդեալի ընտրության և նրա հետ նույնականանալու պահանջմունքից, որն ավելի շատ նմանակում, քան նույնականացումը է ենթարկում: Հատուն մարդու մոտ նույնականացնումը, նախևառաջ, սեփական համոզմությունի մշակում է, լյանքի իմաստի ձևակերպում: Մարդն իրեն ինքնուրույն և կարեւոր է զգում, իր նպատակների իրազորմանը ձգուում է բոլոր հնարավոր միջոցներով: Արդեն նշնակինք, որ որոշ կանայք իրենց լյանքի իմաստը սահմանափակում են երեխայի դաստիարակությամբ: Հոգեկան առողջության տեսակետից սա կարելի է բնութագրել որպես հոգեբանական և վարքային շեղում, սակայն ակնառու ցույց է տալիս, թե մարդն ինչպես կարող է պայքարել մի բանի համար, որը դարձել է գոյության իմաստ: Տարբեր հորբիները և սիրած զբաղմունքները, որպես փոխառության տարրերակ, բնորոշ են այն մարդկանց, ովքեր դժվարություն ունեն լյանքի իմաստի ձևակերպման հարցում:

Լյանքի իմաստի պահանջմունքի բավարարման առավել բարձր ծև է որևէ եթիկական-փիլիսոփայական դիլրորդման մշակումը: Օրինակ՝ հեղողնիզմը: Նպատակին ուղղված ջանքների գործադրումը որոշ մարդկանց մոտ կարող է զուգակցվել բավականության զգացումների հետ: Լյանքի իմաստի պահանջմունքը, ինչպես նշնակինք, ոչմիշտ է հստակ ձևակերպված լինում: Ումանք շեշտում են, որ «ժամանակ չունեն» այդ մասին մտածելու: Իսկապես, միամտություն կլինի կարծել, թե բավական է ունենալ որևէ ձևակերպված գաղափար՝ լյանքի իմաստը ձևավորված ու բավարպված համարելու համար: Երբեմննույնիսկ հնարավոր է հակասություն՝ մարդու դիլրորոշումների, ուղղվածության, լյանքի իրադրությունների և ոչ ճիշտ ձևակերպված լյանքի իմաստի միջև: Հաճախ լինում է այնպես, որ մարդուն թվում է, թե ինքը անվերապահ հնտևում է իր սկզբունքներին, մինչդեռ իրականում նրա գործունեությունը ընդհանուր ոչինչ չունի նրա ընտրած լյանքի իմաստի հետ:

Օրինակ, մարդն իր համար ընտրել է տնտեսագետի մասնագիտություն, զանկանում է արտադրություն կազմակերպել և հասնել մեծ հաջողությունների, մինչդեռ խառնվածքով պատճեն, աստեղիկ, ալարկու է և առաջադրված խնդիրը լուծում է միայն երեսակայության մեջ: Արդյունքը լինում է այն, որ նա սկսում է անհաջողությունների մեջ մեղադրել հանգամանքներին, դեկավարությանը, շրջապատին: Խնդրի բացադրությունն այն է, որ մարդն իր համար ընտրել է անհամեմատ բարդ ուղի, որին դժվար է հասնել իր հոգեկերտվածքը: Մեր շրջապատում շատ կան կյանքի դժվարություններից հիասթափված մարդիկ՝ գրական բնադրատ, որին չի հաջողվել բանաստեղծ դառնալ, տարսու վարդոր, որին չի հաջողվել ուսուցիչ դառնալ, մասգործ, որը ժամանակին նրազնի է քաղաքացին մասին և այլն: Կյանքի իմաստի պահանջմունքը բավարարելու ընդունակություն չունեցող մարդը կարող է ֆրուստրացվել, հակված լինել տարբեր ապաթիաների, անգործունակության, դրանց արդյունքում՝ էքզիստենցիալ նորոգի: Այս դատողություններից կարելի է հանգել շատ կարևոր եզրակացության՝ կյանքի իմաստը մարդու համար պետք է լինի հնարավորինս մատչելի, ոչ կոնկրետ, այլ ընդհանրական, որպեսզի հնարավորություն տա այն բավարարել տարբեր ճանապարհներով: «Հավասարապես անօգուտ է նաև շատ ընդհանրական ձևակերպում՝ օրինակ, դառնալ լավ մարդ, ինչ-որ բանի հասնել և այլն: Այսպիսի անորոշությունը կդժվարացնի համապատասխան մոտիվի ընտրությունը, կյանքի ուղու և վարքագծի կոնկրետացումը: Մարդը կդառնա «անողնաշարավոր»: Վտանգավոր է նաև մոտիվի խեղաթյուրումը: Օրինակ, շրջապատում լավագույնի համբավ վայելով ուսուցուիին բավականություն էր ստանում միայն այն դեպքում, եթե նրան գովարչանում էին, որովհետև ուներ բացահիմության զգացում, ինքնափառահարված էր: Նրա գործունեության ուղղվածությունը, փասորը, մանկամիտ բովանդակությունը ուներ՝ ամեն զնով հասնել գովասանքի: Արդյունքը եղել է այն, որ նրան չվիրակրելու համար գործընկերները ջանում էին քիչ քննադատել, բայց նաև՝ ավելի ու ավելի քիչ գովարանել: Ուսուցիչը մնացել է միջակության սահմաններում: Եթե կյանքի իմաստը հետազնա չէ, այլ զտնվում է ինչ-որ տեղ մոտակայրում, ապա այս դեպքում ևս հնարավոր են տարբեր հակասություններ: Օրինակ, մարդը ձգտել է ճանաչման արժանանալ, որևէ հասարակական դիրք զբաղեցնել, և դա նրան հաջողվել է: Այժմ ակնհայտորեն նվազել է հետազա պայքարի անհրաժեշտությունը, և նա իրեն խաբված է զգում, չբավարարված: Եթե մարդը կյանքի իմաստը ձևակերպել է վաղ տարիքում, օրինակ՝ 12-13 տարեկանում, եթե նրա համար կարևոր է եղել հոգական շփման պահանջմունքի բավարարումը, ապա ողջ կյանքի ընթացքում կարող է ափսոսալ դրա համար: Դեռահասության տարիքում անհնար է ձևակերպել այնպիսի կյանքի իմաստ, որը ակտուալ լինի հասուն մարդու համար: Անձնափորությունը կարող է ծիգերը կենտրոնացնել իր նպատակին հասնելու համար, սակայն հետազայում անպայմանորեն կառչվի «հոգեկանի աղբատազման» վտանգի առջև:

Այժմ վերադառնանք թեմայի մեկնակետին և փորձենք մեկնաբանել կյանքի իմաստի պահանջմունքի գենեզիսը: Ի՞նչ գործուներ են մասնակցում կյանքի իմաստի պահանջմունքի ձևակերպմանը: Մասնագետները գտնում են, որ կյանքի իմաստի ձևակերպման գործում կարևոր դերակատարություն ունի մարդու ռեֆլեքսիան՝ ներհայեցնողական ընդունակությունը, որն անմիջականորեն հիմք է ծառայում այդ պահանջմունքի ձևակերպման համար: Որպես ձևակերպող գործունեություն է ճանաչողական պահանջմունքի հետ կապված էրապանսիվությունը՝ իր նրկու բաղադրիչներով: Առաջին բաղադրիչը կարելի է անվանել բացարձակ ճանաչողություն, եթե նրենսան ձգտում է իմանալ այն ամենը, ինչ նրան հասանելի է: Նա միթույնից վախենում է ոչ թե այն պատճառով, որ մոլոր է, այլ որ «ճանաչելու» ոչինչ չկա, նա անծանված մարդկանցից վախենում է ոչ այն պատճառով, որ այդ մարդը տգեղ է, այլ որ հասանելի չէ իր մեթոդներով և հայտնի չէ, թե ինչ արժեք է ներկայացնում՝ դրական, թե բացասական: Երեկորդ բաղադրիչը ճանաչողության հետ կապված զնահատականն է: Երեխայի համար բնական է ճանաչողության խիստ պրազմատիկ մեխանիզմը՝ ծիս հեծնելու համար է, մայր՝ կերպելու, կատուն՝ խաղալու և այլն: Այսինքն՝ նոր առարկաների իմաստը երեխան հասկանում է այն ժամանակ, եթե ընկալում է նրանց գործառույթը: Երեխայի աճին զուգընթաց վրա է հասուն մի պահ, եթե հետազոտության առարկան դառնում է իր անձը, իր հոգեկանը՝ ո՞վ եմ ես, ինչի՞ համար եմ աշխարհ եկել և այլն: Այս հարցերին նա դժվար է պատասխանում և ֆրուստրացվում է, որովհետև:

ա/ պահանջմունք է զգալի կենսափորձ՝ վերացական հասկացություններով դատողություններ կատարելու համար,

բ/ հարկավոր է զիտելիքների պաշար, որոնցով հնարավոր կլինի ձևակերպել որևէ իմաստ,

գ/ ուշադրության կայուն կենտրոնները, եթե խնդիրը վերաբերում է միջանձնային հարաբերություններին, հասարակական խնդիրներին,

դ/ հոգական հավասարակշանության որոշակի մակարդակը, որը բացակայում է դեռահասության տարիքում:

Զգեստը է մոռանալ նաև դեռահասության տարիքի համար գերիշտող մի երևոյթի՝ պուրերաթի(սերսուալ պահանջմունքի) մասին, որը մեծ չափով ազդեցություն է գործում անձնավորության կողմնորոշումների և նպատակների վրա՝ գործողություններին հաղորդելով անհնատողականություն, անհավասարակշռվածություն, անհաջողության մատնվելու վախ: Ուստի հասունացման տվյալ փուլում ձևավորված կյանքի իմաստի պահանջմունքը, որպես կանոն, մատնված է լինում անհաջողության: Ահա թե ինչո՞ւ այս ժամանակահատվածը անվանում են «դեռահասության ճգնաժամ», կամ «հասունացման դժվարություններ»: Հետաքրքրիր է, որ հասարակական զարգացման ցածր մակարդակ ունեցող ազգությունների մոտ նման լինիր չկա: Պատանին արագ ներգրավվում է ավագների միջավայր, որովհետև կյանքի իմաստը պրիմիտիվ է:

Խնդրու առարկա թեման չենք կարող լիարժեք մեկնաբանված համարել, եթե գոնե համարու անդրադարձ չկատարենք էրգիստնցիալիզմի զաղափարախոսությանը կամ գոյության փիլիսոփայությանը (լատ. exsistentia-գոյություն): Էրգիստնցիալիզմը զեղարվեստական-փիլիսոփայական, միաժամանակ՝ ընդգծված հակագիտական, իռացիոնալ, երբեմն ասվածաբանական և աթեմիստական միտումներով տարածված հոսանք է, ժամանակակից փիլիսոփայության ազդեցիկ ուղղություններից մենքը: Չնափորվել է 20-րդ դարի սկզբներին և շատ զգնրով արտացոլում է այդ ժամանակաշրջանը: Դրանով է բացատրվում էրգիստնցիալիզմի դրույթների մեծամասնության ողբերգական տոնայնությունը և ընդհանուր հոռետնսական երանգավորումը (5):

Էրգիստնցիալիզմի ձևավորման վրա ազդեցություն են թողել Ֆեոդոր Դոստոևսկու, Ֆրիդրիխ Նիցշի, Մ. Շենկերի տեսությունները: Էրգիստնցիալիզմի զաղափարները պաշտպանել և զարգացրել են բազմաթիվ նշանավոր փիլիսոփաներ: Գերմանիայում՝ Մարտին Հայդեգերը, կառ Յասպերսը, Ֆրանսիայում՝ Ժան-Պոլ Սարտրը, Ալբեր Ռամյուն, Ռուսաստանում՝ Լև Շենտովը, Նիկոլայ Բերդյասը:

Էրգիստնցիալիզմը պայմանականորեն բաժանում են կրոնական (Յասպերս, Գաբրիել Մարտի, Բերդյաս և այլն) և աթեմիստական (Հայդեգեր, Սարտր, Ռամյուն և այլն) ուղղությունների: Էրգիստնցիալիզմի կենտրոնական հարցերն են՝ մարդու գոյությունը, կյանքի իմաստը, նրա դերն ու ուղին, ճակատագիրը: Էրգիստնցիալիզմի համար առաջնայինը մարդն է, նրա ներաշխարհը, զգացմունքները, որոշումները: Մարդու գոյությունը նախորդում է էությանը, մարդկային իրականությունը (Հայդեգեր) առաջնային է: Էրգիստնցիալ լինդիրները յուրաքանչյուր մարդու գոյության փաստից բխող լինդիրներ են, մարդու կողմից իր գոյության ձևի զգացումը: Գոյությունը կամ էրգիստնցիան անհնար է փոխանցել հասկացությունների միջոցով, այն օբյեկտ չէ, քանի որ մարդը չի կարող օբյեկտիվորեն դիտարկել իրեն կողքից: Գոյությունը չի ենթարկվում ռազիոնալ ճանաչմանը, այն ճանաչելու միակ միջոցը այդ վիճակը վերապրելն է: Ըստ Յասպերսի, մարդու գոյությունը իմաստավորվում է «սահմանային իրավիճակներում», որոնք են՝ տառապանքը, պայքարը, աշխարհի անողությանը և թշնամանքին դիմակայելու ուղիներ գտնելը:

Էրգիստնցիալիստի համար մարդը զուրկ է էությունից՝ նախքան գիտակից գոյությունը: Մարդը սկզբում գոյություն ունի, և միայն հետո կողմնորոշվում է, մտնում իրական էությունների և իմաստների ոլորտ: Մարդն այն է, ինչ ինքն իրեն դարձնում է: Մարդը ոչ այլ որ է, քան ինքնիրեն նախազծողը: Նա գոյությունունի այնքանով, որքանով ինքն իրեն կերտում և իրականացնում է: Վախկոտը պատասխանատու է իր վախկոտության, ստախոս՝ իր ստի համար: Մարդն է պատասխանատու իր արարքների համար, այլ ոչ թե հասարակությունը:

Ըստ Սարտրի, մարդը պատասխանատու է նաև այլ մարդկանց համար: Բացահայտելով իրեն՝ նա բացահայտում է այլ մարդկանց և դրանով նրանց դարձնում նույնքան իրական, որքան ինքն է: Այլ մարդիկ անհրաժեշտ են անձի գոյության և ինքնաճանաչության համար:

Աթեմիստական էրգիստնցիալիզմը ելնում է այն դրույթից, որ Աստված չկա, ուստի մարդուն ամեն ինչ թույլ է տրված: Մարդն ապրում է աշխարհում, որտեղ կրոնական հոյսը մահացել է, նա պետք է ապրի առանց վերին իմաստի և օգնության: Մարդը լրված է, անզոր, քանի որ չունի հենակետ, ապավինելու ատյան: Մարդն ազատ է: Նա դատապարտված է լինելու ազատ: Միևնույն ժամանակ, կրոնական էրգիստնցիալիստները, ընդունելով մարդու ազատ լինելը և կամքի գերիշտանությունը, գտնում են, որ այդ ազատությունը իր զագայնակենտին է հասնում Աստծուն ճանաչելու միջոցով: Ազատության հետ մեկտեղ, էրգիստնցիալիզմի մեջ կենտրոնական տեղ է գրադեզնում ընտրության զաղափարը: Մարդը տարբերվում է այլ էակներից իր ընտրության, այդ ընտրության համար իր առջև պատասխանատվություն կրելու հնարավորությամբ: Ընտրելով իր համար, մարդը միաժամանակ ընտրում է ամբողջ մարդկության համար: Իր ընտրությամբ մարդը կանգնում է մահ-ոչնչի առջև, դիմակայում դրան, հաստատում իր են-ը, կողմնորոշվում ոչնչի համեմատ: Ըստ կրոնական էրգիստնցիալիզմի, մարդու ընտրությունը տեղի է ունենում Աստծո առջև, իսկ մարդու ծշմարիտ ընտրությունը «Աստծո պատկերի» ընտրության մեջ է:

Գրականություն

1. Конюхов Н.И. Прикладные основы современной психологии: термины, законы, концепции, методы, Москва, 1992г, 72 стр.
2. Немов Р.С.-Психология, Москва, 2005г, 639 стр.
3. VictorE.Frankl. Man's Search for Meaning,1985,Washington Square Press.
4. Роджерс, К. «Теория личности».
5. <https://hy.wikipedia.org/wiki/>
6. <https://ru.wikipedia.org/wiki/> Психология личности.

Տեղեկություններ հետինակի մասին.

Վիտյա Յարամիշյան -

Հոդվածը տպագրության է Երաշխավորել Խմբագրական կոլեգիայի անդամ,
հ.գ.թ., պրոֆեսոր, Ա.Միհթարյանը: